

«Ես ինձ տրված կյանքն ամբողջի Արցախի համար»



**Լեւոն Մարգարյան եւ գրող,
հրապարակախոս եւ
հասարակական գործիչ,
Պաշտպանական գիտությունների
դոկտոր Բագրատ
Ուլուբաբյանի
ծննդյան 75-ամյակը:
Այս առիթով է մեր
հարցազրույցը նրա հետ:**

- Նախքան գրույցը թույլ տվեք
շնորհավորել Ձեր 75-ամյակը եւ
բարեմաղթանք հաղորդել նաեւ
մեր բազմահազար ընթերցողնե-
րի անունից: Դուք, ազգային խն-
դիրներին անմնացորդ նվիրվելով
Ձեր օրինակով, սերունդ եք դաս-
տիարակել:

- Շնորհակալ եմ ջերմ խոսքերի
համար: Դրանք որքան էլ հաճելի լինեն,
առավել հաճելին այն է, որ իրոք կա այն
սերունդը, որը, համոզված եմ, հաղթա-
հարելով այս կյանքի բազմապիսի խո-
չընդոտները, օբյեկտիվ ու սուբյեկտիվ
դժվարությունները, պատվով կկրի իրեն
բաժին հասած ազգային խնդիրների բե-
ռը, կլուծի դրանց գոնե հիմնական մասը
եւ իրենից հետո գալիք սերունդին կթողնի
չեն ու բարեկարգ հայրենիք:

- Մեր ժողովուրդը Ձեզ ծանաչում
եւ գնահատում է առաջին հերթին
որպես արցախյան պահանջատի-
րության մարտիկի: Որպես պատ-
մաբան՝ ինչպե՞ս կգնահատեիք
արցախյան շարժումը:

- Արցախյան շարժումն ի սկզբա-
նե միշտ ունեցել է նվիրյալներ՝ նույնիսկ
ստալինյան բռնատիրության ժամանակ-
ներում: Նրանց անունները պետք է վեր
հանվեն պատմության ամպի ու փոշու
տակից: Սրբազան կրակը մենք նրանցից
ենք ստանձնել 1960-ական թվականնե-
րին բորբոքելու ղարաբաղյան շարժու-

մը: Ասեմ, որ դրան
հաջորդած ժամա-
նակներում էլ պայ-
քարը տարբեր բռն-
կումներ ունեցավ,
սակայն այն տարի-
ների պայքարը
չպետք է այսօրվա
ծեւով հասկանալ:
Դրանք ժամանակ-
ներ էին, երբ նույ-
նիսկ հայկական
միջավայրում Ղա-
րաբաղի հարցի
մասին խոսելը

հազվադեպ էր աջակցություն գտնում,
իսկ պաշտոնական ելույթը կամ մոսկո-
վյան իշխանություններին դիմում հղելը
շատ վտանգավոր ձեռնարկում էր: Հի-
շենք, թե այդպիսի քայլերի համար ինչ-
պիսի հաշվեհարդար տեսան մեզ հետ
հեռացրին աշխատանքից, վտարեցին
Ղարաբաղից: Այնուամենայնիվ, ոչ մի
ուժ չկարողացավ հանգցնել այդ կրակը:
Ուրախ եմ, որ 1988թ. այդ ջախը ստանձ-
նեց արժանի սերունդ եւ հաղթանակով
պսակեց մի քանի սերունդների երա-
զանքն ու պայքարը:

Այս շարժումը մեր ժողովրդի բազմա-
դարյան ազատագրական պայքարի թե-
րեւս ամենափառավոր էջերից մեկը ե-
ղավ, որի շնորհիվ, կարող եմ ասել, ձե-
ւավորվում է հայի նոր կերպար ջնջելով
վշտաբեկ ու աղերսալից ձեւով աշխար-
հի հզորների բարի կամքին ու խղճին դի-
մող կերպարի հետքերը: Այսօր նույն աշ-
խարհին ներկայանում է ոչ թե թղթե շե-
րեփով, այլ հպարտ ու արժանապատվո-
րեն, որպես մի ազգ, որն իր դատը
պաշտպանեց իր ձեռքով ու հասավ
նպատակին: Եվ տեսեք, թե ինչպես դրա-
նից հետո փոխվեց վերաբերմունքը մեր
հանդեպ: Երկար տարիներ մենք ողբում
էինք մեր ճակատագիրը որպես զրկված
ու զարկված ժողովուրդ, եւ դա աշխար-
հին դուր էր գալիս: Բայց մեզ թույլ չէին
տալիս, որ գոնե մեր երկրում խոսենք
Թուրքիայի կողմից իրագործված եղեռ-

նի մասին: Այսօր, ընդհակառակը, աշ-
խարհի հզորներն իրենք են բացեիքաց
քննարկում այդ հարցը: Վերածնվող հա-
յի կերպարը 7-8 տարի առաջ ապշահար
էր արել աշխարհին: Մեզ դատապար-
տում էին արցախյան տարածքներն ա-
զատագրելու համար, նույնիսկ ագրեսոր
էին համարում: Այսօր մոռացվել են այդ
կեղծ կրքերը, եւ սիրով մեզ ընդունում են
քաղաքակիրթ երկրների համայնքի մեջ,
իսկ Թուրքիայի առջեւ փակում են Եվրա-
միության դռները պահանջելով զորքերը
դուրս բերել Կիպրոսից: Մենք պետք է
անհրաժեշտ դասեր քաղենք այս ամե-
նից եւ արժանի գծերով ավելի ամբող-
ջական դարձնենք հայի նոր կերպարը:

- Դուք տասնյակ գեղարվեստա-
կան գրքերի եւ արժեքավոր գի-
տական աշխատությունների հե-
ղինակ եք: Այդ գրքերից ո՞րն է ա-
մենաթանկը Ձեզ համար:

- Դրանք տարբեր են երեւի թե
միայն ընթերցողների համար: Ինձ հա-
մար գեղարվեստական գործ, թե պատ-
մագիտական հետազոտություն նույն ա-
կունքից են բխել: Նույն ակունքից է
սնունդ առել իմ ամբողջ գործունեությու-
նը՝ ազգային կարեւորագույն խնդիրնե-
րին մասնակից լինելուց մինչեւ առօ-
րեական այս ու այն հարցի քննարկումը
կամ երիտասարդ պատմաբանին աջակ-
ցություն ցույց տալը: Ես ոչինչ չեմ ստեղ-
ծել կամ կատարել ժամանակի իրադրու-
թյանը հարմարվելով կամ այս ու այն
գնահատականն ակնկալելով: Այսինքն
չեմ կարող որեւէ գիրք կամ գործ առանձ-
նացնել: Դրանք բոլորը միասին իմ 75-ա-
մյա կյանքի շղթան են կազմում:

- Եվ մի վերջին հարց. երբ հայացք
եք գցում Ձեր անցած ծանապար-
հին, տեսնո՞ւմ եք արդյոք որեւէ
բան, որի համար ափսոսում եք:

- Ես ինձ տրված կյանքն ապրե-
ցի Արցախի համար, որն այսօր արդեն
ազատ է, իսկ դրա համեմատությամբ ա-
մեն-ամեն ինչ աննշան է երեւում: Ափսո-
սում եմ միայն, որ առողջությունս չի նե-
րում այլեւս, որպեսզի այցի գնամ իմ Ար-
ցախին, շրջեմ մեր սուրբ լեռներում, ա-
զատագրված արցախյան տարածքնե-
րում, իմ աչքով տեսնեմ հայ հողի վե-
րածնունդը: Քանի-քանի հուշարձաններ
դեռ սպասում են հետազոտման... Դե,
ինչ արած, այդպիսին է նախախնամու-
թյան կամքը:

Հարցազրույցը՝
ԿԻՍ ՂԱՅՐԱՄԱՆՅԱՆԻ